

**ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԶԻՆՎՈՐԻ ՄԱՅՐ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**Հայաստանի «Զինվորի մայր»
հասարակական
կազմակերպության կողմից իրականացրած
«Զինճառայողների ընտանիքների
սոցիալական շահերի պաշտպանություն»
ծրագրի արդյունքները**

Երևան, 2010



**Հայաստանի «Ջինվորի մայր»
հասարակական
կազմակերպության կողմից իրականացրած
«Ջինժառայողների ընտանիքների
սոցիալական շահերի պաշտպանություն»
ծրագրի արդյունքները**

Երևան, 2010

Հայաստանի «Զինվորի մայր» հասարակական կազմակերպությունը Counterpart International կազմակերպության աջակցությամբ 2010թ. հունվար-ապրիլ ամիսներին իրականացրել է «Զինծառայողների ընտանիքների սոցիալական շահերի պաշտպանություն» ծրագիրը:

Գրքույկը հրատարակվել է Հայաստանի «Զինվորի մայր» ՀԿ-ի ուժերով

Книжка издана на средства общественной организации “Зинвори майр”

Գրքույկում ներկայացված են ծրագրի ընթացքում իրականացված հարցումների, ինչպես նաև քննարկումների, Կլոր սեղանների և Հանրային լսումների արդյունքներում վերհանված խնդիրները և դրանց լուծման համար կազմակերպության կողմից մշակված և առաջարկված հեռանկարային ուղղությունները:

В книжке представлены результаты проекта “Защита социальных прав семей военнослужащих”, реализованного НПО “Зинвори майр” в январе-апреле 2010 года. По результатам опроса, проведенного с членами солдатских семей и ответственными чиновниками сферы социальной защиты военнослужащих, были проведены Круглые столы и Общественные слушания, на которых были представлены актуальные проблемы и предложены перспективные направления для их решения.

Հայաստանի «Ձինվորի մայր» հասարակական կազմակերպությունը Counterpart International կազմակերպության աջակցությամբ 2010թ. հունվար-ապրիլ ամիսներին իրականացրել է «Ձինծառայողների ընտանիքների սոցիալական շահերի պաշտպանություն» ծրագիրը:

Ծրագրի նպատակն էր՝ երևանում, Գեղարքունիքի և Լոռու մարզերում շահառուների շրջանում կատարված հարցումների, ինչպես նաև շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների հետ քննարկումների և բանավեճերի միջոցով հստակեցնել զինծառայողների ընտանիքների սոցիալական շահերի պաշտպանության ոլորտում տեղ գտած օրենսդրական և օրենքի կիրառման մեխանիզմների թերությունները, ներգրավելով այդ գործընթացում նշված սոցիալական խմբերին: Ծրագրի շահառուներն էին ազգային բանակի զինծառայողների ընտանիքները:

Ծրագրի ընթացքում իրագործվել են մի շարք *միջոցառումներ*.

- պատրաստվել են հարցաթերթիկներ և անցկացվել է հարցում շահառուների և շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների շրջանում
- Կազմակերպվել են հանդիպումներ շահառուների հետ երևանում և մարզերում
- կազմակերպվել են հանդիպումներ և մարզային քննարկումներ պատկան մարմինների ներկայացուցիչների և շահառուների հետ
- կազմակերպվել է Կլոր սեղան և Հանրային լսումներ շահագրգիռ պետական և հասարակական կազմակերպությունների, ՁԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ

Ծրագրի ընթացքը մեկ անգամ ևս ի հայտ բերեց այնպիսի թերություններ, ինչպիսին են շահառուների թերտեղեկացվածությունը և անտեղյակությունը իրենց սոցիալական իրավունքների վերաբերյալ:

Մյուս կողմից էլ շահագրգիռ մարմինները տեղեկացվեցին այդ ոլորտի խնդիրների նկատմամբ հասարակական կազմակերպության հետաքրքրության մասին և գործնականում տեսան համագործակցության եզրեր պետական և հասարակական կառույցների միջև սոցիալական ոլորտում:

Ծրագրի ընթացքում վերհանված *պրորելները*

- շահառուների անտեղյակությունը իրենց սոցիալական իրավունքների պաշտպանության ոլորտում
- շահառուների թերահավատությունը պետական կառույցների նկատմամբ
- Շահագրգիռ կառույցների պասիվությունը՝ այս խմբի սոցիալական պաշտպանվածության ոլորտում բարեփոխումներ, օրենսդրական և նորմատիվային փաստաթղթեր մշակելու նախաձեռնություններով հանդես գալու բնագավառում:

1. Համագործակցություն և կարևոր հանդիպումներ

Ծրագրի իրագործման ընթացքում հանդիպումներ են եղել ՀՀ ՊՆ Ռազմաբժշկական, Սոցիալական պաշտպանության, Դաստիարակության վարչությունների, ՀՀ առողջապահության և Սոցիալական պաշտպանության և աշխատանքի մախարարության պատասխանատուների հետ:

Նախարար Մխիթար Մնացականյանի և փոխնախարար տ-ն Ջենմա Բաղդասարյանի հետ հանդիպումների ժամանակ քննարկվել են զինծառայողների ընտանիքների սոցիալական խնդիրները, մասնավորապես՝ նպաստների ծրագրերում նրանց ընդգրկվածության /«Փարոս» համակարգ/, ծառայություն անցնող զինվորի ծնողների աշխատանքային արտոդրությունների, տրանսպորտային զեղչերի և այլ հարցեր: Նախարարի հետ քննարկվել է նաև հաշմանդամ զինվորականների հանգստի կազմակերպման համակարգի կարգը, որը վերջին տարիներին գրեթե չի աշխատում:

ՀՀ ՊՆ և Առողջապահության նախարարության համապատասխան գերատեսչությունների ղեկավարների հետ քննարկվել են զինվորների ընտանիքների անդամների բուժօգնության, դեղորայք ստանալու խնդիրները, ներկայացվել են շահառուներից ստացված դիմում-բողոքներն ու առաջարկությունները: Քննարկվել է նաև այս խմբի շահառուների համար անվճար դեղատան վերականգնման հարցը:

Բոլոր քննարկումների ժամանակ հնչել է այն տեսակետը, որ զինծառայողների ընտանիքների անդամները, մասնավորապես զինվորների մայրերը, իրազեկված չեն իրենց իրավունքների վերաբերյալ և շատ հաճախ իրենց դիմումներում չեն նշում իրենց որդու ծառայության հանգամանքը, ինչի արդյունքում

չեն սպասարկվում որպես արտոնություններ ունեցող սոցիալական խումբ:

Նախարարությունների և գերատեսչությունների պատասխանատուները պատրաստակամություն են հայտնել շարունակելու համագործակցությունը կազմակերպության հետ, իսկ բարձրացված հարցերը քննարկել առաջիկա Կլոր սեղանի ժամանակ:

2. իրականացրած միջոցառումները

- 2010թ. փետրվարի 12-ին կազմակերպվել է *սեմինար-ուսուցում`* ծրագրի շրջանակներում հարցում իրականացնող կամավորների հետ: Սեմինարին ներկա են գտնվել 10 կամավորներ Երևանից, Ճամբարակից և Ստեփանավանից: Կամավորներին բացատրվել է կատարվելիք հարցման բնույթն ու նպատակները, բաժանվել են հարցաթերթիկները:

- 2010թ. փետրվարի 25-ին կազմակերպվել է *սեմինար-հանդիպում* ազգային բանակում ծառայող զինվորների մայրերի հետ: Սեմինարին մասնակցել են Երևանի Արաբկիր, Նոր Նորք, Կենտրոն, ինչպես նաև Ճամբարակի և Ստեփանավանի տարածքային զինկոմիսարիատներից զորակոչված և ազգային բանակում ծառայություն անցնող զինվորների մայրեր: Սեմինարի նպատակն էր վերհանել զինվորների ընտանիքների սոցիալական խնդիրները:

Կազմակերպության կողմից իրականացված *հետազոտությունները* ցույց են տվել, որ զինվորների մայրերը մեծամասամբ ծանոթ չեն օրենքներին և չեն ցուցաբերում անհրաժեշտ ակտիվություն` իրենց և իրենց ընտանիքների իրավունքների պաշտպանության բնագավառում: Մայրերի հետ կազմակերպված քննարկումից հետո հնարավոր դարձավ հստակ դասակարգել նրանց ընդհանուր խնդիրներն ըստ կարևորության:

- Քնարկման ժամանակ նշվեց, որ առաջներում գոյություն ունեցող անվճար դեղատները` նախատեսված զինծառայողների և զինվորական հաշմանդամների համար, թեթևացնում էին նրանց ընտանիքների հոգսը: Այսօր ընտանեկան բյուջեյի զգալի մասը ծախսվում է դեղորայքի վրա: Մայրերը նպատակահարմար են գտնում բարեգործական դեղատների վերաբացումը:
- Արդիականությունը չի կորցնում նաև զորամաս գնալու համար անվճար տրամադրվող տրանսպորտային միջոցների խնդիրը: Շատ մայրեր չեն կարողանում

օգտվել այդ ծառայությունից: Նրանք նշում են, որ տրանսպորտային ծառայությունը հստակ չի կազմակերպված, իսկ որոշ զինկոմիսարիատներում դժկամությամբ են հերթագրում ծնողներին:

- Մայրերից շատերը մտահոգված են գնաճով, քանի որ նրանցից շատերը որդու բանակ մեկնելուց հետո հայտնվել են սոցիալապես ծանր վիճակում: Այս կապակցությամբ նշվում էր, որ զինվորների մայրերը որպես սոցիալական խումբ պաշտպանված չեն և ակնկալում են պետությունից որոշակի քայլեր:
- Հատուկ նշվեց այն հանգամանքը, որ մայրերից շատերը օգտվում են անվճար բուժօգնության ծառայություններից, ներառյալ տարբեր բարդության վիրահատությունները:

Կլոր Սեղան

Կլոր Սեղանը տեղի է ունեցել մարտի 24-ին: Ներկա են եղել 17 մասնակիցներ: Մասնակիցների թվում էին ՀՀ Սոցիալական պաշտպանության և աշխատանքի փոխնախարար տ-ն Ջեմա Բաղդասարյանը, ՀՀ ՊՆ սոցապահության վարչության պետի տեղակալ պ-ն Արա Սարգսյանը, ՀՀ ՊՆ Կենտրոնական զինկոմիսարիատի ֆինանսական վարչության պետ պ-ն Վ. Հակոբյանը, ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչ տ-ն Ս. Ղասաբյանը, զինծառայողների մայրեր, լրագրողներ:

Ելույթների ժամանակ ճշտվեցին որոշ օրենսդրական դրույթներ, որոնք հասու չեն շահառուների լայն խավերին:

- Ընտանիքնի անդամ են համարվում մայրը, հայրը, ինչպես նաև անչափահաս քույրը և եղբայրը, կինը, երեխաները:
- Տղայի ծառայության ժամանակ ընտանիքն ազատվում է գույքահարկից՝ որդու չափաբաժնի մասով
- ծառայության ժամանակ հիվանդացած կամ վիրավորված զինծառայողները իրավունք ունեն զինվորական թոշակ ստանալու միայն այն ժամանակ, երբ ստանան հաշմանդամության կարգ:

Ամփոփելով ելույթները Կլոր սեղանի մասնակիցները որոշեցին միասնական ջանքերով ՀՀ հեռուստատեսության որևէ ալիքով ստեղծել խորհրդատվական ժամ, որտեղ բնակչությանը հուզող հարցերին կպատասխանեն համապատասխան

ուղորտների մասնագետները, կիեռարձակվեն տեղեկատվական հաղորդումներ, կպարզաբանվեն օրենքները:

Հանրային լսումներ

Հանրային լսումները տեղի են ունեցել ս.թ. ապրիլի 20-ին Գոլդեն Թուլիփ հյուրանոցի սրահում: Մասնակիցների թվում էին ՀՀ Սոցիալական պաշտպանության և աշխատանքի նախարարության ներկայացուցիչ տ-ն Աստղիկ Մինասյանը, ՀՀ ՊՆ սոցապահովության վարչության պետ տ-ն Լ.Ղահրամանյան, ՀՀ առողջապահության ներկայացուցիչ, զորակոչի պատասխանատու տ-ն Ս. Ղասաբյանը, ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության ներակայացուցիչ Ս. սիմոնյանը, ՀՀ ՊՆ անձնակազմի հետ աշխատանքի վարչության պետ՝ գնդապետ Վանիկ Մինասյանը, ՀՀ Միգրացիայի պետական ծառայության ներկայացուցիչ տ-ն Ա. Ավետիսյանը, միջազգային և տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ, զինծառայողների մայրեր, լրագրողներ:

Քննարկման մասնակիցները լսեցին խնդրո առարկայի հետ առնչվող ուղորտների պատասխանատու աշխատակիցների ելույթները՝ օրենսդրական դաշտում և ընթացակարգերում կատարված փոփոխությունների վերաբերյալ:

ՀՀ ՊՆ սոցապահովության վարչության պետ տ-ն Լ.Ղահրամանյանը խոսեց զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանության մասին, նշելով, որ մշակվում են նոր և վերանայվում են այդ խմբի համար նախատեսված նպաստների և ֆինանսական օժանդակությունների տրամադրման կանոնակարգերը:

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության ներակայացուցիչ Ս. Սիմոնյանը և ՀՀ ՊՆ անձնակազմի հետ աշխատանքի վարչության պետ՝ գնդապետ Վանիկ Մինասյանը ներկայացրեցին «Զինծառայողների ընտանիքների սոցիալական ապահովության մասին» ՀՀ Օրենքի մեջ տեղ գտած փոփոխությունները և տվեցին համապատասխան իրավաբանական մեկնաբանություններ:

ՀՀ առողջապահության ներկայացուցիչ, զորակոչի պատասխանատու տ-ն Ս. Ղասաբյանը պատասխանեց հիվանդ զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամների առողջապահական խնդիրներին առնչվող բազմաթիվ հարցերին:

«Զինվորի մայր» կազմակերպության նախագահ տ-ն Գրետա Միրզոյանը բարձրացրեց նաև պատերազմի հաշմադամ

և զինծառայության ժամանակ հիվանդություն ստացած քաղաքացիների սոցիալական պաշտպանության հարցը: Այդ սոցիալական խմբի համար դեռևս չեն գործում լիարժեք մեխանիզմներ՝ նրանց սոցիալական, առողջապահական և կենցաղային վիճակը բարելավելու համար:

Նախարարությունների և գերատեսչությունների պատասխանատուներն իրենց ելույթներում պատրաստակամություն հայտնեցին շարունակելու համագործակցությունը կազմակերպության հետ:

Քննարկմանը մասնակցեցին նաև Հայաստանի Հելսինկյան Ընկերակցության նախագահ պ-ն Ավ. Իշխանյանը, Ջոհված ազատամարտիկների ՀԿ-ի նախագահ տ-ն Ա. Արմենակյանը, Արմենպրեսի, էլեկտրոնային կայքերի և օրաթերթերի լրագրողներ:

Քննարկումը նկարահանվեց «Ջինուժ» ծրագրով:

Վերհանված խնդիրների լուծման համար կազմակերպությունն առաջարկել է իր կողմից մշակված գործողությունների հեռանկարային ծրագիր, որը ներռում է.

- ❖ բարեգործական դեղատների վերաբացմանն ուղղված աշխատանքներ
- ❖ Հաշմանդամ զինծառայողների նպաստների և թոշակների չափերի աստիճանական բարձրացման քաղաքականության լրբինգ
- ❖ Հաշմանդամ զինծառայողների համար ակունքների ստեղծմանն ուղղված աշխատանքներ

Այս ծրագիրը ներկայացված է ՀՀ Կառավարություն:

Для решения актуальных проблем, выявленных в результате реализации проекта организация выработала и предложила перспективные направления для их решения, которые включают:

- ❖ Действия, направленные на восстановление благотворительных аптек
- ❖ Лоббирование политики ступенчатого повышения размеров пенсий и пособий инвалидов-военнослужащих
- ❖ Действия, направленные на создание клубов для инвалидов-военнослужащих

Программа представлена в Правительство РА

ՕՐԵՆՔՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Համաձայն ՀՀ կառավարության թիվ 318 Որոշման «...ընտանիքի անդամ են համարվում մայրը, հայրը, անչափահաս քույրը և եղբայրը, կինը, երեխաները»: Մինչ այդ սոցիալական արտոնություններից օգտվում էին միայն զինծառայողի հայրը և մայրը:
- Տղայի ծառայության ժամանակ ընտանիքը ազատվում է գույքահարկից՝ որդու չափաբաժնի մասով:
- ՀՀ կառավարության թիվ 45Է Որոշման համաձայն ծառայության ժամանակ հիվանդացած կամ վիրավորված զինծառայողները իրավունք ունեն գինվորական թոշակ ստանալու միայն այն դեպքում, երբ ձևակերպվի հաշմանդամության կարգը:
- Նպաստառու ընտանիքների տղայի զորակոչի դեպքում ընտանիքի անդամների թիվը նպաստառուների ցուցակում չի նվազում, հետևաբար՝ մեկ շնչի եկամուտի հաշվարկը չի փոփոխվում, և ընտանիքը 2 տարի շարունակում է ստանալ աղքատության նպաստը:

ЛЬГОТЫ, ЗАКРЕПЛЕННЫЕ ЗАКОНОДАТЕЛЬСТВОМ РА

- Согласно Постановлению правительства Республики Армения # 318 “... Членами семьи считаются мать, отец, несовершеннолетние брат и сестра, жена, дети”. До этого социальными льготами пользовались только мать и отец военнослужащего.
- Во время службы сына семья освобождается от налога на недвижимость, являющуюся его частью от общей собственности.
- Согласно Постановлению правительства РА # 45 Э военнослужащие, заболевшие или раненые во время прохождения службы, имеют право на получение военной пенсии лишь в том случае, если получают группу инвалидности

- Если из семьи, получающей пособие по бедности, призывник уходит на службу, число членов семьи не сокращается, а следовательно – не изменяется расчет дохода на каждого члена семьи, и семья получает пособие на протяжении двух лет службы сына.

КОММЕНТАРИИ К ПРОЕКТУ

Председатель комитета солдатских матерей "Зинвори майр"
Грета МИРЗОЯН:

- Согласно правительственному постановлению N318 от 2004г., членами семьи военнослужащего считаются мать, отец, несовершеннолетние брат и сестра, жена и дети. На практике же, к сожалению, только родители солдата пользуются бесплатной медицинской помощью. Что же касается дедушки и бабушки, то, как правило, они могут пользоваться бесплатными медуслугами по иным программам в ином статусе. А в особых случаях могут обратиться непосредственно к министру здравоохранения письменно. Что касается семейного пособия, то с вами обошлись несправедливо: в случае призыва в армию члена семьи сумма пособия "Парос" не меняется и семья продолжает его получать в течение двух лет в прежнем объеме.

Кстати, на период службы солдат освобождается от налога на причитающуюся ему недвижимость. А если собственность совместная, то семья его долю не оплачивает.

Газета "Голос Армении", май,2010

Как сообщила начальник социально-аналитического отдела управления соцзащиты МО РА Людмила КАГРАМАНЯН, в связи с кризисом заявки, поступившие в конце прошлого года о предоставлении помощи, не были удовлетворены. Но уже с января текущего года по всем этим обращениям начаты выплаты. Кстати, теперь жителям марзов нет необходимости являться непосредственно в управление соцобеспечения военнослужащих, они могут послать заявление по почте. Изменился и порядок выплат: если раньше деньги получали на

месте, то теперь по заявкам, собранным за месяц, сумма выделяется в конце месяца.

Кроме того, семья военнослужащего, получившего инвалидность, связанную с несением службы (если инвалидность установлена территориальной врачебно-социальной комиссией), а также семьи погибших азатамартиков ставятся на учет в управлении соцзащиты и пользуются определенными льготами. Так, в случае женитьбы детей инвалида или погибшего азатамартика при представлении свидетельства о браке они получают единовременную помощь в 100 тыс. драмов. В случае смерти члена семьи погибшего азатамартика или инвалида семье выплачивается 100 тыс. драмов единовременной помощи. Помощь предусмотрена и в случае болезни членов семьи - при представлении эпикриза или соответствующей справки о прохождении стационарного лечения МО выделяет 30 тыс. драмов, а лечение в госпитале лечуправления МО проходит в рамках госзаказа.

У бывших азатамартиков-инвалидов есть также возможность обратиться к министру. В случае если семья инвалида или погибшего азатамартика оказалась в тяжелом социальном положении, то министр по своему усмотрению может выделить от 30 тыс. до 100 тыс. драмов нуждающейся семье для оплаты коммунальных услуг.

К тому же Минобороны реализует жилищную программу. Семьи, состоящие на учете в МО и вставшие в очередь на жилье в органах местной власти, обеспечиваются соответствующей суммой на приобретение квартиры. На данном этапе программы обеспечиваются семьи инвалидов I и II группы, а через 5 лет семье предоставляется возможность улучшить жилищные условия.

“АиФ”, май, 2010

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ 1
Ձինվորների մայրերի համար

«Ձինվորի մար» կազմակերպությունը նախաձեռնել է հետազոտություն զինծառայողների ընտանիքների սոցիալական շահերի պաշտպանության վերաբերյալ: Հարցումն անանուն է, սակայն ցանկության դեպքում կարող եք նշել Ձեր անունը

- ❖ **Ձեր տարիքը**
 18-25 25-35 35-50 50 և ավելի
- ❖ **Կրթությունը**
 Թերի միջնակարգ Միջնակարգ Բարձրագույն
- ❖ **Սեռը**
 Արական Իգական
- ❖ **Ձեր ընտանիքի անդամների թիվը _____**
- ❖ **ընտանիքում աշխատող անդամների թիվը _____**
- ❖ **Ձեր ընտանիքում կա՞ն հաշմանդամներ**
 Այո Ոչ
- ❖ **Ձեր ընտանիքում կա՞ն անչափահաս երեխաներ**
 Այո Ոչ
- ❖ **ընտանիքի անդամներից քանի՞սն են ծառայել կամ ծառայում զինված ուժերում _____**
- ❖ **Ձեր կարծիքով, զինվորների ընտանիքները պե՞տք է օգտվեն արտոնություններից:**
 Այո Ոչ
- ❖ **Ձեր որդու ծառայության ընթացքում դուք երբևէ օգտվե՞լ եք որևէ սոցիալական արտոնությունից**
 Այո Ոչ
- ❖ **Եթե այո, ինչպիսի՞ արտոնություններից**
 - սոցիալական նպաստներ
 - ՀՀ ՊՆ նպաստ
 - Անվճար բուժօգնություն
 - Ձորամաս գնալու համար անվճար տրանսպորտի ծառայություններ
 - Այլ _____
- ❖ **Բավարարել է ձեզ արդյոք այդ օգնությունը**
 Այո Ոչ

- ❖ **Եթե ստացել եք անվճար բուժօգնություն, ապա ի՞նչ կարգի**
 - Մասնագետի խորհրդատվություն

- Ամբուլատոր բուժում
 - Ստացիոնար բուժում
 - Վիրահատություն
 - Ձեռչային գներով դեղորայք
- ❖ Ունեցե՞լ եք արդյոք աշխատանքային խնդիրներ ձեր որդու ծառայության ժամանակ
- Աշխատանքից ազատելու/կրճատելու
 - աշխատավարձը իջեցնելու
 - այլ _____
- ❖ ի՞նչ արտոնություններից կուզենայիք օգտվել ձեր որդու ծառայության ընթացքում
- անվճար կամ զեղչված գներով դեղորայք
 - կոմունալ ծախսերի զեղչեր
 - անվճար բուժսպասարկում /ներառյալ վիրահատություն/
 - տրանսպորտային զեղչեր
 - այլ _____

ОПРОСНЫЙ ЛИСТ 1

Для солдатских матерей

Организация «Зинвори майр» проводит исследование по защите социальных прав семей военнослужащих.

Опрос анонимный, но при желании можете назвать себя.

- ❖ Ваш возраст 18-25 25-35 35-50 50 и старше
- ❖ Образование
- Среднее незаконченное Среднее Высшее
- ❖ Пол Мужской Женский
- ❖ Количество членов вашей семьи _____
- ❖ Количество работающих в семье _____
- ❖ Есть ли в вашей семье инвалиды .
- Да Нет
- ❖ Есть ли в вашей семье несовершеннолетние дети?
- Да Нет

- ❖ Сколько членов семьи проходили или проходят службу в ВС РА? _____
- ❖ По вашему, должны ли родители солдата пользоваться социальными льготами?
 Да Нет
- ❖ В течение службы вашего сына приходилось ли вам пользоваться какими-либо льготами?
 Да Нет
- ❖ Если да, какими?
 - социальные пособия
 - пособие от МО РА
 - бесплатная медицинская помощь
 - бесплатная транспортная служба до в/части
 - другие _____
- ❖ Удовлетворила ли вас эта помощь
 Да Нет
- ❖ Какого типа бесплатную медицинскую помощь вам оказали
 - Консультация специалиста
 - Амбулаторное лечение
 - Стационарное лечение
 - Операция
 - Льготные лекарства
- ❖ В период службы сына возникали ли у вас проблемы по месту работы
 - Увольнение/сокращение
 - Понижение зарплаты
 - Другие _____
- ❖ Какими льготами вы бы хотели пользоваться в период службы сына
 - бесплатные или льготные лекарства
 - льготы на коммунальные услуги
 - бесплатное медицинское обслуживание(включая операции)
 - транспортные льготы
 - другие _____

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ 2
Ուղորտի պատասխանատուների համար

«Ձիմվորի մար» կազմակերպությունը նախաձեռնել է հետազոտություն զինծառայողների ընտանիքների սոցիալական շահերի պաշտպանության վերաբերյալ: Հարցումն անանուն է, սակայն ցանկության դեպքում կարող եք նշել Ձեր անունը

- ❖ Ձեր կարծիքով, զինվորների ընտանիքները պե՞տք է օգտվեն արտոնություններից:
 - Այո
 - Ոչ

- ❖ Եթե այո, ինչպիսի՞ արտոնություններից
 - սոցիալական նպաստներ
 - ՀՀ ՊՆ նպաստ
 - Անվճար բուժօգնություն
 - Ջորամաս գնալու համար անվճար տրանսպորտի ծառայություններ
 - Այլ _____

- ❖ Բժշկական ուղորտի ի՞նչ կարգի արտոնությունների համար են ձեզ դիմում ավելի հաճախ զինվորների ծնողները
 - Սասնագետի խորհրդատվություն
 - Ամբուլատոր բուժում
 - Ստացիոնար բուժում
 - Վիրահատություն
 - Ձեռնային գներով դեղորայք

- ❖ Աշխատանքային ինչպիսի՞ խնդիրների համար են ձեզ դիմում ավելի հաճախ զինվորների ծնողները
 - Աշխատանքից ազատելու/կրճատելու
 - աշխատավարձը իջեցնելու
 - այլ _____

- ❖ Ձեր կարծիքով ի՞նչ կարգով պետք է լուծվեն զինվորների ծնողների սոցիալական ապահովության խնդիրները
 - օրենսդրական
 - գերատեսչության ներքին կանոնակարգով
 - օրենքի կիրառման մեխանիզմների կատարելագործում

ОПРОСНЫЙ ЛИСТ 2

Для чиновников социальной сферы

Организация «Зинвори майр» проводит исследование по защите социальных прав семей военнослужащих.

Опрос анонимный, но при желании можете назвать себя.

❖ Как вы считаете, должны ли семьи военнослужащих срочной службы пользоваться льготами

Да Нет

❖ Если да, какими

- Социальные пособия
- Пособия министерства обороны
- Бесплатная медицинская помощь
- Бесплатный транспорт для поездки в воинские части
- Другие

❖ Для получения льгот в медицинской сфере с какими просьбами чаще всего обращаются солдатские родители

- Консультация специалиста
- Амбулаторное лечение
- Стационарное лечение
- Хирургические операции
- Лекарства по льготным ценам
 - ❖ С какими вопросами по трудоустройству чаще всего обращаются солдатские родители

- Увольнение с работы или сокращение штатов

- Понижение заработной платы

- Другие

❖ По вашему, в каком порядке должны разрешаться проблемы в сфере социальной защиты семей военнослужащих

- Законодательном

- Ведомственными нормативными документами

- Совершенствованием механизмов применения законов